

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11/7

22 մարտի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Ալվարո Գաբրիելյանի 22.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.01.2016թ-ի թիվ 285/03-16 որոշման դեմ:

Քաղաքացի Ալվարո Գաբրիելյանի գանգատում բերված փաստարկները.

Ալվարո Գաբրիելյանը հայտնում է, որ ս/թ հունվարի 29-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի 0082 բաժանմունքից ստացել է իր հանգուցյալ ամուսնուն՝ Սերոբ Քոչարյանի անվամբ հաշվառված անհատ ձեռնարկատիրոջը հասցեագրված ծրարը և ծանոթացել Սերոբ Քոչարյան ա/ծ-ի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 26.01.2016թ-ի թիվ 285/03-16 որոշման հետ: Այդ վարչական ակտի համաձայն՝ առաջարկվել է վճարել նախկինում, դեռևս 2000թ-ի 1-ին եռամսյակից հաշվարկված և չվճարված ընդհանուր գումարով 370.000 դրամ հարկային պարտավորությունների գումարները, այդ թվում՝ 341.247 դրամ սոցիալական վճարի, 9.490 դրամ եկամտահարկի, 19.263 դրամ հաստատագրված վճարի գումարները:

Կից ներկայացնելով ՔԿԱԳ ԵՀՍ-ի կողմից 14.01.2003թ-ի թիվ 200712 մահվան վկայականի պատճենը, որի համաձայն Սերոբ Քոչարյանը մահացել է 07.01.2003թ-ին և հայտնելով, որ մինչև «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» 19.12.2012թ-ի թիվ ՀՕ-258-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, ուժի մեջ եղած «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» 11.11.2005թ-ի թիվ ՀՕ-215 ՀՀ օրենքի և «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» 11.11.2005թ-ի թիվ ՀՕ-215-Ն ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին» 21.08.2008թ-ի թիվ ՀՕ-151-Ն ՀՀ օրենքի ուժով, ինչպես նաև ներկայումս գործող «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» 19.12.2012թ-ի թիվ ՀՕ-258-Ն օրենքի 1, 2 և 3 հոդվածների համաձայն Սերոբ Քոչարյան ա/ծ-ն ազատված է եղել եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների վճարումից:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է 26.01.2016թ-ի թիվ 285/03-16 վարչական որոշումը վերացնել:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Սերոբ Քոչարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

պարզել է, որ 20.01.2016թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 370.000 դրամ, այդ թվում՝ եկամտահարկ 9.490 դրամ, հաստատագրված վճար 19.263 դրամ, սոցիալական ապահովության վճար 341.247 դրամ:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 26.01.2016թ-ին ընդունվել է թիվ 285/03-16 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Սերոն Բոչարյանից 370.000 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող ապացույցները, գտնում է, որ Որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն 14.01.2003թ-ին տրված թիվ ԱԱ թիվ 200712 մահվան վկայականի, քաղաքացի Սերոն Բոչարյանը 07.01.2003թ-ին մահացել է:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն. «Հարկային պարտավորությունը դադարում է դրա կատարման, հարկի վերացման, հարկից ազատելու արտոնության սահմանման, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ»:

Հանձնաժողովը հարկ է համարում հատկապես անդրադառնալ սոցիալական ապահովության վճարի գծով գանձման առաջադրված պարտավորությանը՝ ընդհանուր գումարով 341.247 դրամ: Մասնավորապես, Որոշման համաձայն սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունն առաջացել է 2009թ. հունվարից մինչև 2012թ. դեկտեմբեր ամիսների հաշվարկներից, ինչը, սակայն, հիմնավոր չէ և չի համապատասխանում իրականությանը, քանի որ Սերոն Բոչարյանը 07.01.2003թ-ին մահացել է: Ընդ որում հարկ է նշել, որ «Հարկատու 3» տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Սերոն Բոչարյանը ունի մահացածի կարգավիճակ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 26.01.2016թ-ի թիվ 285/03-16 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.Մ. ԽՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
